

Պլոտինոսի կեանքին մասին գրած է իր շատ սիրելի աշակերտը, ասորական ծագում ունեցող **Պորփիրիոս** (Porphyrios, 232 – 304 թ.), որ նաեւ Պլոտինոսի գլխավոր երկին հրատարակողն է (այս մասին՝ հետագային): Պլոտինոսի մահէն ետք, իր աշակերտներու պատուերով ժամանակի նշանաւոր արուեստագետ նկարիչ **Կարտերիոս** (Karterios), իր յիշողութեան վրայ յենելով կը պատրաստէ յոյն փիլիսոփային դիմանկարը, որ ըստ Պորփիրիոսի՝ շատ հարազատ է:

232 թուականին, 27-ամեայ Պլոտինոս կը մեկնի Ալեքսանդրիա, որու նշանաւոր դպրոցին մէջ գլխավորաբար փիլիսոփայութիւն կ'ուսանի, ուսուցիչ ունենալով յոյն նշանաւոր փիլիսոփայ **Ամմոնիոս Սակկաս** (յուն.՝ Ammonios Sakkas, 175 – 242 թ.), նախահայրը Նոր-Պլատոնական փիլիսոփայական ուղղութեան: Պլոտինոս մեծապէս ազդուած է իր ուսուցչէն, որ նմանութիւններ ունի դասական յոյն փիլիսոփայ Պլատոնի ուսուցիչ Սոկրատէսի հետ: Թէ՛ Սոկրատէս եւ թէ Ամմոնիոս գրական աշխատանքներ չեն կատարած, այլ իրենց զօրաւոր անհատականութեամբ եւ արտասանած խօսքերով մեծ ազդեցութիւն ունեցած են իրենց աշակերտներուն վրայ: Բացի իր ուսուցչէն, Պլոտինոս ազդուած է նաեւ 2-րդ դարու կիսուն Սուրիա ապրած յոյն փիլիսոփայ **Նումենիոս Ապամայեցիէն** (յուն.՝ Noumenios, 2-րդ դար), որու յոյն աշակերտներէն մէկը, **Ամելիոս** (յուն.՝ Amelios Gentilianos, 3-րդ դար), հետագային պիտի աշակերտէր նաեւ Պլոտինոսի:

11 տարիներ Ալեքսանդրիա մնալէ ետք, երբ արդէն մահացած էր իր ուսուցիչ Ամմոնիոս Սակկաս, Պլոտինոս կ'որոշէ ուսումնասիրել նաեւ հին պարսկական ու հնդկական բազմերանգ կրօնափիլիսոփայութիւնները: **Գորդեան Գ.**⁴⁵ (Gordian III) կայսեր բանակին հետ միատեղ Անտիոքէն կ'ուղղուի դէպի Արեւելք (243 թ.): Կայսեր Սասանեան Պարսկաստանի դէմ արշաւանքը, սակայն, կը ձախողի ու կայսեր մահէն ետք Պլոտինոս, փախուստ տալով, կը վերադառնայ ու շրջան մը կը բնակի սուրիական Անտիոքի մէջ:

245 թուականին, 40-ամեայ Պլոտինոս կը հաստատուի Հռոմ, ուր կը հիմնէ իր Նոր-Պլատոնական ուղղութեամբ փիլիսոփայութեան դպրոցը, որ հռչակաւոր կը դառնայ: Թէ՛ Պլոտինոսի դպրոցի ուսուցման լեզուն եւ թէ իր երկերու լեզուն՝ յունարէնէն էր: Դպրոցի առաջին տարիներուն, Պլոտինոսի կողքին կային նաեւ Ամմոնիոս Սակկասի երկու աշակերտները (**Օրիգենէս**⁴⁶ եւ **Հերենիոս**), որոնց

45 Գորդեան Գ. (Gordian III, 225 – 244 թ.).-

Հռոմի երիտասարդ կայսր: Պէտք չէ շփոթել Փռիւզիոյ (Phrygia) թագաւոր **Գորդիոսի** (Gordios) հետ, որ *Ալեքսանդր Սակտրոնացիի* (Alexander III, 356 – 323 մ.թ.ա.) ժամանակակից եղած է եւ որու անունին կապուած է «*Գորդեան հանգոյց*» իմաստալի բառակապակցութիւնը:

46 Օրիգենէս (Origenes, մահացած 286 թուականին).-

Ամմոնիոս Սակկասի աշակերտած, հեթանոս Նոր-պլատոնական փիլիսոփան, պէտք չէ շփոթել անոր անուանակից ու ժամանակակից **Օրիգենէս Ալեքսանդրացիի** (185 – 254 թ.) հետ, որ քրիստոնեայ, «Ադամանտիոս» անուանեալ աստուածաբան մըն էր: